ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ 1954 թ. գեկտեմբերին տեղի ունեցավ դիսկուսիա՝ «Հայաստանի սոցիալ տնտեսական զարգացման մակարդակը X—XIII դարերում և Վերածնության հարցը» թեմայով։ Երկու հակադիր տեսակետներ ներկայացնող զեկուցումներով հանդես եկան փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Զալոյանը, որ պնդում էր, թե Հայաստանը ունեցել է իր Վերածնությունը և պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Բ. Առաքելյանը, պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը, որոնք պնդում էին, թե Հայաստանը Վերածնության ժամանակաշրջան (Ռենեսանս) չի ապրել։

Դիսկուսիային իրենց ելույթներով մասնակցեցին մի շարք պատմաբաններ, գրականագետներ, արվեստագետներ և այլ մասնագետներ։

Դիսկուսիայի վերաբերյալ համառոտ ինֆորմացիա զետեղվեց «Տեղեկագրի» 1955 թ. 1-ին համարում։ Այնուհետև «Տեղեկագրի» 1955 թ. 12-րդ համարում և 1956 թ. 4-րդ համարում տպագրվեց Վ. Զալոյանի զեկուցումը, իսկ 1956 թ. 5-րդ համարում Բ. Առաքելյանի զեկուցումը։ 1956 թ. 6-րդ համարում տպագրվեց նաև փիլիսոփայական գիտ. դոկտոր Հենրի Գաբրիելյանի և 1958 թ. № 3 Լ. Խաչիկյանի, № 5 Հովհ. Թումանյանի հոդվածները։ Այս պրոբլեմի շուրջը ս/թ ապրիլ ամսին դիսկուսիա կազմակերպվեց նաև ՀՍՍՌ ԳԱ Տնտեսագիտական ինստիտուտի կողմից, որին մասնակցեցին մեր տնտեսագետները, պատմաբանները և գրականագետները։ «Տեղեկագրի» ներկա համարում զետեղելով պրոֆ. Վ. Զալոյանի պատասխան հոդվածը, խմբագրությունը կամենում է ամփոփել դիսկուսիայի արդյունքները, հաշվի առնելով լայն գիտական հասարակայնության կարծիքը։

Հարկ է կանգ առնել առավել կարևոր հարցերի վրա։

Առաջին հարցը, որը բնականաբար, զբաղեցրեց դիսկուսիայի մասնակից ներին, վերաբերում է Վերածնության էությանը։

Պրոֆ. Բ. Առաքելյանը, Լ. Խաչիկյանը և Հ. Գաբրիելյանը համերաշխում են մեր գիտության մեջ ընդունված այն տեսակետի հետ, համաձայն որի՝ Վերածնությունը Արևմտյան և կենտրոնական Եվրոպայի մի շարք երկրների հոգևոր և նյութական կուլտուրայի, հասարակական մտքի զարգացման մի պատմական ժամանակաշրջան է, որը պայմանավորված է կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորմամբ՝ այդ երկրներում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ սոցիալ-տնտեսական նախադրյալներ են գոյանում նոր հասարակության առաջացման համար և սկսվում է վճռական ճակատամարտը ֆեոդալիզմի դեմ, երբ սկսվում է բուրժուական աղգությունների կազմավորումը։ Այդ ժամանակ դեռևս ռևոլյուցիոն դեր խաղացող բուրժուազիան գլխավորում է պայքարը ընդդեմ ֆեոդալիզմի, որին հաջորդող հասարակությունը այլ բան լինել չէր կարող, քան կապիտալիստականը։ Այս ամենի պատճառով էլ առաջանալով դեռևս ֆեոդալական հասարակության մեջ, Վերածնության կուլտուրան ու գաղափարախոսությունը իրենց էությամբ կրում էին վաղ բուրժուական բնույթ և հակադրված էին ֆեոդալական հասարակությանը, նրա կուլտուրային ու գաղափարախոսությանը։

Հիշյալ հեղինակները կանգնած են այն տեսակետի վրա, որ Վերածնությունը բնորոշ է Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներին, իսկ Հայաստանում X—XIII դդ. Վերածնություն առաջացնող պայմաններ չեն եղել։ Նրանք գտնում են, որ X—XIII դարերում Հայաստանը ապրում էր ոչ թե ֆեոդալիզմի քայքայման, այլ վերելքի և զարդացման ժամանակաշրջան. հասարակական միտքը և կուլտուրան էլ բնորոշ էին զարգացած ֆեոդալիզմին և ոչ Վերածնությանը։ Ապրելով բուռն զարգացում, այդ կուլտուրան հասավ մի այնպիսի բարձրության և երևան բերեց այնպիսի գծեր, որոնք բնորոշ են Վերածնությանը նախորդող ժամանակաշրջանին, սակայն նրա հետագա զարգացումը խափանվեց։

Պաշտպանելով հակառակ տեսակետ, Վ. Ջալոյանը գտնում է, որ Վերածնությունը պրոգրեսիվ կուլտուրայի ծաղկումն է, իսկ Վերածնության կուլտուրան իր աշխարհայացքային հիմքում առաջավոր խավերի պայքարն է ֆեոդալիզմի տիրապետության դեմ, կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում, երբ տեղի էին ունենում ֆեոդալիզմի հիմքերը ցնցող առաջին ճակատամարտերը։ Սակայն այդ պայքարը մղում էին հասարակության առաջավոր խավերը, առաջին հերթին աշխատավոր ժողովուրդը, ուստի Վերածնության կուլտուրան սոսկ վաղ բուրժուական բնույթ չի ունեցել, այլ նրա մեջ եղել են երեք հոսանքներ։ Հասարակության աշխատավոր խավերի, բուրգերության և առևտրա-վաշխառուական բուրժուազիայի և արիստոկրատիայի հոսանքները։ Այս երեք հոսանքներից առաջնությունը, ըստ Վ. Ջալոյանի, պատկանում էր ժողովրդականին։ «Վերածնության կուլտուրայի գլխավոր օղակը, ասում է նա,— պատկանում է աշխատավոր ժողովրդին»։

Վ. Ջալոյանը գտնում է, որ Հայաստանում X—XIII դարերում զարգացել են այնպիսի սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնց հիման վրա ձևավորվել է վաղ Վերածնության կուլտուրան, որը բարձր զարգացման չհասավ օտար նվաճողների տիրապետության պատճառով։ Այդ շրջանի կուլտուրայի մեջ Վ. Ջալոյանը տեսնում է միայն երկու հոսանք՝ «աշխատավոր ժողովրդի կուլտուրան» և հայ ֆեոդալական հասարակության բարձրագույն դպրոցի ու կրթված միջավայրի կուլտուրան։ Վերածնությունը, ըստ Ջալոյանի, իր մեջ ոչինչ բուրժուական չի պարունակում։

Վ. Ջալոյանը, Վերածնությունը բնութագրելով իբրև ընդհանրապես հասարակության առաջադիմական խավերի՝ քաղաքի և գյուղի աշխատավորության, բյուրգերության, առևտրա-վաշխառուական խավի և ֆեոդալական բարձրագույն դպրոցի ու կրթյալ շրջանների (իսկ Հայաստանում միայն առաջին և երկրորդ խավերի) պայքար ընդդեմ ֆեոդալիզմի, նկատի չի առնում բուրժուազիայի դերը։ Դեռևս ֆեոդալական հասարակության ընդերքում ծնունդ առնող կապիտալիստական հարաբերությունների և նոր հասարակության առաջ ճանապարհ հարթելու համար՝ ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի հիման վրա առաջացող իր սոցիալ-դասակարգային էությամբ վաղ բուրժուական կուլտուրան Վ. Ջալոյանը անտեսում է։

Բ. Ն. Առաքելյանը, Լ. Ս. Խաչիկյանը, Հ. Մ. Թումանյանը, ինչպես և 1954 և 1958 թվականներին կազմակերպված դիսկուսիաներում իրենց ելույթներով մասնակցած մի շարք ընկերներ գտնում են, որ Ջալոյանը խոշոր հարստությունների կուտակումը X—XIII դդ. մեծատունների ձեռքում անհիմն կերպով նույնացնում է կապիտալի նախասկզբնական կուտակման հետ, իսկ միջնա-

դարյան ամեն մի քաղաքի համար բնորոշ սևագործների բազմության (чернь) առկայությունը համարում է նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի հիմնական արտադրողների ունեզրկման (էքսպրոպրիացիայի) հետևանք։

Խմբագրությունը գտնում է, որ որոշ սխալներ են թույլ տալիս նաև Վ. Ջալոյանի ընդդիմախոսները։ Պրոֆ. Բ. Առաքելյանը կանգ չի առնում եվրոպական Վերածնության մեջ եղած հոսանքների հարցի վրա և չի քննարկում ժողովրդի դերը Վերածնության կուլտուրայի ստեղծման մեջ։

Պրոֆ. Հ. Գաբրիելյանը, հանդես գալով Վ. Ջալոյանի տեսակետների դեմ, կոնկրետ նյութի հիման վրա չի քննում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը IX—XIII դարերում, ինչպես և Վերածնության վիճելի հարցը Հայաստանում։ Այդ պատճառով Հ. Գաբրիելյանի հոդվածը կրում է ընդհանուր սոցիոլոգիական բնույթ, և այնտեղ պատմական շատ նրբություններ մնում են չնկատված։ Օրինակ, նա գրում է, թե «Վերածնությունը հանգչում էր ֆեոդալիզմի ընդերքում առաջացող կապիտալիստական արտադրաեղանակի վրա», փոխանակ ասելու արտադրական հարաբերությունների վրա, պնդում է թե ֆեոդալիզմի դեմ պայքարող առաջավոր խավերի թվում ֆեոդալներ չպետք է լինեին։ Այս ընդհանուր դատողությունը չի արտահայտում պատմական ճշմարտությունը։ Ֆեոդալիզմի դեմ ֆեոդալ դասակարգը, իհարկե, չէր պայքարում, բայց ֆեոդալական աշխարհիկ և հոգևոր ծագում ունեցող առաջավոր գործիչներ գտնվեցին, որոնք հասկանալով, թե դեպի ուր է զարգանում պատմությունը, որդեգրվեցին Վերածնության շարժմանը։ Նրբանկատությունը բացակայում է նաև վերակացուների ինստիտուտի վերաբերյալ պնդումների մեջ և այլն։

Վ. Ջալոյանի նամակի տպագրությամբ խմբագրությունը փակում է Հայկական Վերածնության հարցին նվիրված հոդվածաշարքը։ Արծարծվեցին բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են՝ Վերածնության հասկացությունը որպես այդպիսին, կապիտալի նախասկզբնական կուտակումը Հայաստանում X—XIII դարերում, այդ ժամանակաշրջանի հայկական առաջավոր արվեստի, գրականության և փիլիսոփայության ըմբռնման հարցերը Վերածնության տեսանկյունով և այլն։ Եղան տարբեր, իրարամերժ տեսակետներ և դա հասկանալի է, չէ որ առաջ են քաշվել լուրջ, բազմակողմանի ուսումնասիրության կարոտ պրոբլեմներ։ Ինքնին հասկանալի է նաև այն, որ այդ հարցերի սպառիչ լուծումը մեր ամսագրի էջերում չէր կարող լինել խմբագրության նպատակը։ Մեր խնդիրն էր քննության առնել Հայկական Վերածնության առեղծվածի լուծման զանազան ասպեկտներ, այդ ուղղությամբ առաջ բերել հետաքրքրություն մեր գիտական հասարակայնության մեջ, որը կհանդիսանա առաջմղիչ գործոն, կատարելու համար նոր պրպտումներ և նոր նյութերի հայթայթումներ որոնք հիմքեր կտան այդ բարդ հարցի լուծմանը նվիրված նոր հետազոտությունների համար։